

Մուտք համակարգ mID-ի միջոցով

Ինչ է mID-ին



mID-ն դա բջջային էլեկտրոնային թվային ստորագրություն է:

Այն ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել Ձեր բջջային կապի օպերատորին, ձեռք բերել նոր ձևաչափի SIM քարտը և օպերատորի հետ իրականացնել բոլոր կարգավորումները mID-ին ակտիվացնելու համար:


Ինչպե՞ս մուտք գործել համակարգ mID-ի միջոցով

mID-ին ակտիվացնելու հետո դրոշմավորման համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացված գործողությունները՝ հետևյալ հաջորդականությամբ:

1. Անցնել համակարգի հղումով:

<https://markirovka.emark.am/login-kep>

2. Բացված պատուհանում սեղմել «ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ» կոճակը (նկար 1):



նկար 1

3. «ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ» կոճակը սեղմելուց հետո բացվում է Առցանց նույնականացման միասնական համակարգի մուտքի էջը (նկար 2):

Առցանց նույնականացման միասնական համակարգ



Նկար 2

4. Ընտրել «**Բջջային նույնականացման քարտ**» կոճակը (նկար 3):


Առցանց նույնականացման միասնական համակարգ



Նկար 3


5. Բացվող պատուհանում ընտրել բջջային կապի օպերատորին և մուտքագրել հեռախոսահամարը, որը կցված է mID-ին:
Սեղմել «**Մուտք**» կոճակը (նկար 4):

Առցանց տոյնականացման միասնական համակարգ




Նկար 4

6. «Մուտք» կոճակը սեղմելուց հետո նշված հեռախոսահամարին կհայտնվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է մուտքագրել Ձեր MID PIN կոդը և սեղմել «OK» կոճակը (նկար 5):



Նկար 5

7. «OK» կոճակը սեղմելուց և mID PIN կոդը ուղարկելուց հետո վեբ էջում բացվում է համակարգի մուտքի էջը, որտեղ անհրաժեշտ է մուտքագրել կազմակերպության ՀՎՀՀ-ն և սեղմել «ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ» կոճակը (նկար 6):



Նկար 6